պէտ իշխէր 'ի վերայ ամենայն զօրաց և գնտից զինուորաց, և տայր պատերազմ և առնէր աւար վասն հռոմայեցւոց, այլ որում ժամանակի որ գտանէր մեղք և սղալանք մի 'ի գործոց ձեռաց և կամ արարս ինչ ընդդէմ Օրինաց յորում բոպէի որ հրաման ելանէր 'ի ծերակուտէն առ պաշտօնատարն, զի յանձն արասցէ զօրութիւն իւր զինուորօք և զինուք առ այլ, որում հրամայեցեալ լինէր խորհրդարանէ ծերակուտից և դառնալ առ 'ի կոչումն ծերակուտից համանգամայն կատարումն առնէր հրաման ծերակուտին ըստ Օրինացն որպէս փայլակն սրնթագնացի, նա ևս ունին Օրէնս զի տային պաշտօնս պաշտօնատարաց ժամանակաւ և երբեմն հողագործի միոյ եթէ արժանի գտանիւր և ստանէր նայ պաշտօն նախարարութեան և ընթանայր 'ի գործ և գործէր գործս իւր յոյժ իմաստութեամբ, որ երջանիկ առնէր զինքն և բոլոր յազգն իւր այնքան անկեղծ և առանց ցանկութեան ընչից և կատարեալ հաւատարմութեամբ և սիրով, որ երբեմն 'ի ժամանակս երիս ամօք վարելով գործ նախարարութեան սպարապետութեան իւրոյ, և յետ լրումն ժամանակին պաշտօնին իւրոյ՝ յետս դարձուցանէր հրովարտաքն պաշտօնէին նախարարութեան իւրոյ 'ի մէջ խորհրդարանի ատենի ծերակուտին և գտանէր Շնորհ ընկալութիւն բոլոր տանէն հռոմու վասն բարեպէս կատարելոյ գործ պաշ-